ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ
ԴԻՍՊԱՆՍԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ք.Վանաձոր, Նժդեհի 57
հեռ. /322/ 2-01-88, 2-41-63
email. lorirpnd@gmail.com

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЛОРИЙСКИЙ ОБЛАСТНОЙ ПСИХОНЕВРОЛОГИЧЕСКИЙ ДИСПАНСЕР
ГОСУДАРСТВЕННОЕ ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО

РА г.Ванадзор ул.Нждеа 57
тел. /322/ 2-01-88, 2-41-63
email. lorirpnd@gmail.com

«28» 08 2023 թ. No 01/1000

<<ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ>> ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԱՐՏԱՇԵՍ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ
Ք.ԵՐԵՎԱՆ, ՆՈՐ ՆՈՐՔ 0056
ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱ, 11/20
ԷԼ. ՓՈՍՏ cowperwoodco@yandex.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Համաձայն <<Լոռու մարզային հոգեբուժական դիսպանսեր>> ՊՓԲԸ (այսուհետ՝ Պատվիրատու) և <<ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ>> ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող) միջև <<Լոռու մարզային հոգեբուժական դիսպանսեր>> ՊՓԲԸ 2023թ. կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 2022 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված թիվ ԼՄՀՆԴ-ԳՀԱՊՁԲ-23/03 ծածկագրով <<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման>> պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) 1.1 կետով սահմանված կարգով՝ <<ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ>> ՍՊ ընկերությունը պարտավոր էր մատակարարել Հավելվածով նախատեսված սննդամթերքը սահմանված ժամկետում և ծավալներով: Սակայն 2023թ. օգոստոսի 23-ին՝ ի պատասխան էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված սննդամթերքի մատակարարման հերթական գրավոր պահանջագրի, Մատակարարի կողմից ստացվել է նամակ, որով վերջինս հրաժարվել է մատակարումից, տեղեկացնելով տնտեսական գործունեության դադարեցման մասին:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է այն՝ հրաժարվելով մատակարարումներից, ինչի պատճառով խաթարվում է <<Լոռու

մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲԸ ստացիոնար բաժանմունքում բուժման մեջ գտնվող հիվանդների սննդով ապահովման գործընթացը:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.7 ենթակետի պահանջները՝ <<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲ ընկերությունը 2023 թվականի օգոստոսի 28-ից միակողմանի լուծում է 2022 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված <<ԼՄՀՆԴ-ԳՀԱՊՁԲ-23/03>> ծածկագրով պայմանագիրը ընդհանուր 1 580 578 /մեկ մլն հինգ հարյուր ութսուն հազար հինգ հարյուր յոթանասունութ/ ՀՀ դրամի չափով: Կիրառելով սույն <<ԼՄՀՆԴ-ԳՀԱՊՁԲ-23/02>> ծածկագրով ընթացակարգի Հրավերի 10.6 դրույթները, <<ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ>> ՍՊԸ-ին տրվում է 10 /տասը/ օրացույցային օր՝ Հավելված 4.2-ով նախատեսված որակավորման ապահովման 237 086.7 /երկու հարյուր երեսունյոթ հազար ութսունվեց/ ՀՀ դրամի չափով և Հավելված 5.1-ով նախատեսված պայմանագրի ապահովման 158 057.8 մեկ հարյուր հիսունութ հազար հիսունյոթ/ ՀՀ դրամի չափով գումարները <<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲ ընկերության բանկային հաշվին փոխանցելու համար:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում, համաձայն <<Գնումների մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի, <<ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ>> ՍՊԸ-ին <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների>> ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ Մատակարարի կողմից Պայմանագիր կնքելու նպատակով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով կներկայացվեն Մատակարարի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

Հարգանքով՝

<<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲԸ տնօրեն՝ **/Ա.Ա.Ղուլիջանյան/**